ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի № 1098-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___»_____ 2023 թվականի N ____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի №

1098-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 28.2-
րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «գ» ենթակետի դրույթները և առաջնորդվելով «Նորմատիվ իրավական
ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի
2023 թվականի նոյեմբերի 13-ի №1134-Ա որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը որոշում է՝
1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի «Հայաստանի
Հանրապետության համայնքների (բացառությամբ Երևանի) վարչական տարածքում գտնվող՝ պետական
սեփականություն համարվող անշարժ գույքի (բացառությամբ հողերի), իրավաբանական անձանց
կանոնադրական կապիտալում պետական մասնակցության, այդ թվում՝ անավարտ շինարարության
օբյեկտների մասնավորեցումից ստացվող միջոցների տնօրինման կարգը հաստատելու մասին» N 1098-Ն
որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) որոշման վերնագրից, 1-ին կետից, որոշմամբ հաստատված կարգի վերնագրից և 1-ին կետից
հանել «(բացառությամբ հողերի)» բառերը.
2) որոշման 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.
3) որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե)
մասնավորեցումից ստացված գումարների փոխանցման մասին տեղեկատվությունը 10-օրյա ժամկետում
տրամադրում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն), ինչպես նաև համապատասխան համայնքին։».

4) որոշմամբ հաստատված կարգի.
ա. 5-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«1) Երևանի քաղաքապետին՝ Կոմիտեի կողմից ներկայացված տեղեկատվության հիման վրա
Երևանի ավագանու նիստի քննարկմանը ներկայացնել ծրագիրը (ծրագրերը) և այն հաստատվելու օրվանից
10-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարին.».
բ. 5-րդ կետի 2-րդ ենթակետի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր
պետական գույքի կառավարման վարչության» բառերը փոխարինել «Կոմիտեի» բառով.
գ. 6-րդ և 7-րդ կետերից հանել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման»
բառերը.
դ. 8-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, Հայաստանի
Հանրապետության տարածքային կառավարման» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

« » ---------- 2023թ.

Երևան